ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2016 թվականի N 209 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման մեջ կատարել լրացում և փոփոխություն՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. 2019 թվականին Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպելու համար Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային այլանսին անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի փոխանցումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը 2016 թվականի առաջին եռամսյակում հատ-

կացնել 150,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, բայց ոչ ավելի 75,000.0 հազ. դրամից՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով):

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ դրամաշնորհային պայմանագրի կնքումը սույն որոշման 2-րդ կետում նշված երաշխիքային կանխավճարի փոխանցումն իրականացնելու նպատակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մարտի 10
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 10-ի N 209 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.11 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

Չափորոշիչներ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)							
	ոչ ֆինանսական ցուցանիշներ				ֆինանսական ցուցանիշներ			
	առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի	առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	ինն ամիս	տարի

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1. Քաղաքականության միջոցառումներ

1.1. **Ծառայություններ**

Ծրագրային դասիչը		Անվանումը Հայաստանի ՏՏ-ի ոլորտի մրցունակության բարձրացում. Հայաստանի վարկանիշի ձևավորում՝ որպես ՏՏ-ի տարածաշրջանային կենտրոն Նկարագրությունը Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպելու համար Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային այլանսին անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի տրամադրում							
1043	ԱԾ 04								
Քանակական		Մշակված չէ							
Որակական		Մշակված չէ							
Ժամկետայնության		Մշակված չէ							

Մատուցված ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)	X	X	X	X	150.0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	150.0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	150.0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	150.0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1043 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ								
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հայաստանում 2019 թվականին Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպում								
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները) Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն								

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 10-ի N 209 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Բաժին 2. Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը, խումբը, դասը)		ՀՀ 2016 թվականի պետական բյուջե
1043			**Ծրագիր**	150.0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
			Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ	
			Ծրագրի նկարագրությունը	
			ՏՀՏ-ի կատարելագործված ենթակառուցվածքների ապահովում, համակարգչային հագեցվածության և ինտերնետի հասանելիության բարձրացման միջոցառումներ	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը	
			ՏՀՏ-ի ենթակառուցվածքների բարելավում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	

	ԱԾ 04		Հայաստանի ՏՏ-ի ոլորտի մրցունակության բարձրացում. Հայաստանի վարկանիշի ձևավորում՝ որպես ՏՏ-ի տարածաշրջանային կենտրոն	150.0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
			Մատուցվող ծառայության նկարագրությունը	
			Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը Հայաստանում կազմակերպելու համար Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային այլանսին անհրաժեշտ երաշխիքային կանխավճարի տրամադրում	
			Ծառայություն մատուցողի անվանումը	
			Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ